ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 նոյեմբերի 2015թ. № 143-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԼՈՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի, <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 23-րդ հոդվածի, 56^2-րդ, 244^9-րդ և 305-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության <<Հողային օրենսգրքի>> 42-րդ հոդվածի 2-րդ կետի, <<Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդված 3-րդ կետի դրույթներով և համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի գեոդեզիայի և հողային պետական տեսչության պետի 2015 թվականի հոկտեմբերի 22-ի ''Հողերի օգտագործման և պահպանման խախտումների'' մասին N9 ակտի, **որոշում եմ.**

1. Համայնքային սեփականության հողամասը քաղաքաշինական, հողաշինարարական նախագծերին չհամապատասխանող նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործման տրամադրելու համար Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Լոր գյուղական համայնքի ղեկավար Դավիթ Առուստամյանին ենթարկել վարչական պատասխանատվության՝ նրա նկատմամբ կիրառելով <<տուգանք>> վարչական տույժը՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:
2. Վարչական իրավախախտման համար կիրառված տուգանքը 15-օրյա ժամկետում ենթակա է մուտքագրման Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:
3. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2015թ. նոյեմբերի 5
ք. Կապան